ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ 09-1/2022-2023
ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 07.03.2023թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ն. Համբարձումյանի, Մ. Գալստյանի և Լ. Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Հանձնաժողովի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 9-ին հարուցված «ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Հրաչյայի Բաղդասարյանի կողմից իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ» թիվ 09/2022 վարույթի նյութերը,

պարզեց.

1. 2022 թվականի դեկտեմբերի 9-ին Ալինա Արտաշեսի Գեղամյանի դիմումի հիման վրա Հանձնաժողովը հարուցել է թիվ 09/2022 վարույթը՝ ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի կողմից իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ:

2. 2022 թվականի դեկտեմբեր-փետրվար ամիսների ընթացքում Հանձնաժողովը իրականացրել է վարույթի համար հիմք հանդիսացող փաստական հանգամանքների, ինչպես նաև գործում առկա նյութերի ուսումնասիրություն:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում վարույթի շրջանակներում պետական հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի անդամի կարգավիճակի հետ կապված հարցերը պարզաբանելու նպատակով սույն վարույթի

շրջանակներում դիմելու լիազորված պետական մարմին, ինչն էական նշանակություն ունի վարույթում:

«Վարչարարության և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ վարչական վարույթը կարող է երկարաձգվել, եթե փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը:

3. Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Վարչարարության և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

2022 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի կողմից իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ հարուցված թիվ 09/2022 վարույթի ժամկետը երկարացնել 30 օր ժամկետով՝ մինչև 2023 թվականի ապրիլի 6-ը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ